

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի քոլեջի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի 2018 թ. հունվար- դեկտեմբեր ամիսների

2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ պլանավորված և արտապլանային աշխատանքները.

1. Կրթահամալիրի ակադեմիայում և քոլեջում ամբիոնի կողմից կատարվել է պլանավորված ուսումնական ծանրաբեռնվածությունը :
2. Անցկացվել են պլանով նախատեսված գիտական խմբակների նիստեր սովորողների հետ, որոնք արձանագրվել են համապատասխան տեղեկանքներով /8 նիստ/:
3. Կազմակերպվել և անցկացվել են սովորողների նախաստուգարքային ու նախաքննական կոնսուլտացիաները:
4. Կազմակերպվել և անցկացվել են սովորողների ստուգարքներն ու քննությունները:
5. Ամբիոնի պետ Մ. Նազարյանի, պրոֆեսոր Ռ. Սարգսյանի և դոցենտ Ա.Սարգսյանի կողմից ղեկավարվել են կրթահամալիրի սովորողների ուսումնական և նախաավարտական պրակտիկաներ:
6. Ամբիոնի պրոֆեսոր Ռ. Սարգսյանը ՀՀ ազգային արխիվում գիտահետազոտական աշխատանքներ է կատարում Հայաստանի ոստիկանության ուսումնական հաստատության և Հայաստանի ոստիկանության պատմության վերաբերյալ: «Պատիվ ունեմ» Կրթահամալիրի թերթի դեկտեմբերյան համարում հոդված է տպագրել ոստիկանության պատմությունից:
7. Թարմացվել են դասախոսությունների տեքստերը, թեմատիկ պլանները և ուսումնական ծրագրերը:
8. Կատարվում են ընթացիկ պլանավորված ուսումնամեթոդական, գիտահետազոտական և դաստիարակչական աշխատանքներ:
9. Ամբիոնի պետ Մ.Նազարյանը աշխատում է «Ոստիկանության ծառայողի մասնագիտական էթիկա» դասագրքի պատրաստման վրա:
10. Դասախոս Ա. Սարգսյանը տպագրության է նախապատրաստել „Роль национальных традиций, этнических и культурных особенностей в подготовке сотрудников полиции Республики Армения., գիտական հոդվածը և «Օրենքի պատվար» Կրթահամալիրի ամսագրում տպագրել է „Проблема особой психологической подготовленности сотрудников полиции Республики Армения к охране правопорядка и действиям при его нарушениях., գիտական հոդվածը: <<Դասը վարում է ոստիկանը>> ծրագրի շրջանակներում դաս է անցկացրել ք.Երևանի թ.180 միջնակարգ դպրոցում:

11. Դասախոս Մ.Դավթյանը ուսումնամեթոդական սլայդեր է նախապատրաստել «Տրամաբանություն» ու «Քաղաքագիտություն առարկաներից»:
12. Դասախոս Ա.Գրիգորյանը ու դասախոս Մ.Կարապետյանը անցկացրել են թեստավորում քուէջի սովորողների շրջանում «Անձի շեշտադրվածության ուսումնասիրումը ուսումնական գործընթացի բարելավման համատեքստում» ձեռնարկի համար նյութերի նախապատրաստման աշխատանքների շրջանակներում:
13. Դասախոս Մ.Կարապետյանը գիտական զեկույց է ներկայացրել „Взаимосвязь ценностных ориентаций и агрессивности подростков” թեմայով Հայ – ռուսական սլավոնական համալսարանի գիտագործնական կոնֆերանսում:

Ամբիոնի պետ, ոստ. գնդապետ՝

Մ.Ս. Նազարյան

17.12.2018թ.